



Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2019 թվականի հունիսի 18-ին և 19-ին Կոտայքի, Գեղարքունիքի և Լոռու մարզպետարաններում անցկացվեցին մարզային կլոր սեղան քննարկումներ մարզպետարանների, ՀԿ ներկայացուցիչների միջև:

Հանդիպման հիմնական նպատակը «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների ներկայացումն էր, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների և նրանց երեխաների հետ աշխատանքի նոր մեխանիզմների ստեղծման համար առաջարկությունների հավաքագրումը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ոլորտում առկա բացերը, մասնակիցները հանդես եկան առաջարկություններով ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրն իրականացվում է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից:



